

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-- դեկտեմբերի 2016 թվականի N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇԻՎ ԲԱՅԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 404, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2016 թվականի հոկտեմբերի 19-ի ԱԺՈ-240-Ն որոշումներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև 2016 թվականի մայիսի 19-ին Բրյուսելում ստորագրված «Հորիզոն-2020. հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիր (2014-2020)» Միության ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագիրը՝ համապատասխան ֆինանսավորումը ստանալու և միջազգային կազմակերպությունների կողմից օժանդակվող ծրագրերին տրամադրվող գումարների շրջանառությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական ստորաբաժանումում բացել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի արտաբյուջետային միջոցների նոր հաշիվ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը գործողության ժամկետով:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ԱԺՌ-240-Ն որոշմամբ 2016 թվականի հոկտեմբերի 19-ին վավերացված «Հորիզոն-2020. հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիր (2014-2020)» Միության ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ֆինանսական ներդրումների կառավարման լիազորությունները վերապահվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեին:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Կարեն Կարապետյան

2016 թ. դեկտեմբերի  
Երևան

## **ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

### **«ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ**

Սույն իրավական ակտի ընդունումը պայմանավորված է 2016 թվականի հոկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև կնքված «Հորիզոն-2020. հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիր (2014-2020)» Միության ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ԱԺՈ-240-Ն որոշմամբ:

Ծրագրի նպատակն է նպաստել Եվրոպական հետազոտությունների տարածքի և նորարարական Միության հասանելիությանը: Ծրագրում մասնակցության յուրաքանչյուր տարվա համար Հայաստանը վերոնշյալ համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան պարտավորվում է ֆինանսական ներդրում կատարել Եվրոպական միության ընդհանուր բյուջե երկրի համախառն ներքին արդյունքին համապատասխան սահմանված գործակցի չափով: Սույն հոդվածի 2-րդ կետով Հայաստանի ֆինանսական ներդրման մի մասը կարող է ֆինանսավորվել Միության համապատասխան արտաքին օգնության միջոցների հաշվին: Սույն միջոցների հավաքագրման ու նպատակային օգտագործման համար անհրաժեշտ է բացել արտաբյուջետային հաշիվ:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՈԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Սույն որոշման նախագծի հետ կապված պետական բյուջեում ծախսերի կամ եկամուտների փոփոխություններ չեն սպասվում:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

### **1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.**

«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեին արտաբյուջետային հաշիվ բացելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումն այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

### **2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը.**

Համապատասխանում է միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեին արտաբյուջետային միջոցների հաշիվ բացելու թույլտվություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների

Հ/Հ	Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1.	ՀՀ արդարադատության նախարարություն 23.12.2016թ. N 01/14/17386-16	<p><u>Պետական փորձագիտական եզրակացություն</u></p> <p>Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի և 14-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ նախագծի վերնագրում «Ն» տառն անհրաժեշտ է փոխարինել «Ա» տառով՝ հաշվի առնելով նախագծի իրավական բնույթը: Այդ առումով անհրաժեշտ է նաև հանել նախագծի 3-րդ կետը՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի պահանջների:</p>	Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
2.	ՀՀ ֆինանսների նախարարություն 20.12.2016թ. N 01/78-1/28247-16	ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեին արտաբյուջետային միջոցների հաշիվ բացելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:		